


ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ



Մարզկենտրոնը՝ ք. Վանաձոր
Տարածաշրջանները՝ Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Թումանյան, Գուգարք
Քաղաքները՝ Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի,
Տաշիր, Ախթալա, Թումանյան, Շամլուղ

ՀՀ Լոռու մարզը գտնվում է հանրապետության հյուսիսում, տարածքի մեծությամբ երրորդն է հանրապետությունում, բնակչության թվաքանակով՝ երկրորդը (ք.Երևանից հետո):

Մարզը հյուսիսից *պետական սահմանով սահմանակից է* Վրաստանին, հարավից՝ ՀՀ Կոտայքի և Արագածոտնի մարզերին և արևմուտքից՝ ՀՀ Շիրակի մարզին:

Տարածքը	3789 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	12.7 %
Քաղաքային համայնքներ	8
Գյուղական համայնքներ	105
Քաղաքներ	8
Գյուղեր	122
Բնակչության թվաքանակը 2007թ. հունվարի 1-ի դրությամբ	282.7 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	166.1 հազ. մարդ
գյուղական	116.6 հազ. մարդ
Մարզի բնակչության ընդհանուր թվաքանակում քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	58.8 %
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2006թ.	8.8 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2006թ. հուլիսի 1-ի դրությամբ)	251200 հա
այդ թվում՝ վարելահողեր	42122 հա

Մարզում ծովի մակերևույթից բարձրագույն կետը Թեժ լեռան գագաթն է (3101մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 390 մ):

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերը *գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են*: Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնապահական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, մասնավորապես՝ մետաղագործական արդյունաբերություն և սննդամթերքի արտադրություն ճյուղերը :

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին:

Քեոնատղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտով:

2006թ. **մարզի տնտեսության** հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 7.1 %,
- գյուղատնտեսություն՝ 10.5 %,
- շինարարություն՝ 3.0 %,
- առևտուր և ծառայություններ՝ 4.0 %:

ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը		
	2004	2005	2006
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	1100	1137	1169
<i>այդ թվում՝</i>			
խանութներ	298	336	348
կրպակներ	767	766	784
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	4	4	4
սպառողական ապրանքների շուկաներ	4	4	4
առևտրի այլ օբյեկտներ	27	27	29

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը		
	2004	2005	2006
Հաստատություններ, ընդամենը	260	265	266
<i>որոնցից՝</i>			
նախադպրոցական պետական	52	54	56
հանրակրթական պետական դպրոցներ	168	169	168
երաժշտական, արվեստի, գեղարվեստի, դպրոցներ , մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	23	23	24
պետական միջին մասնագիտական ուսումնական	8	9	9
ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	3	3	3
պետական բարձրագույն ուսումնական	1	1	1
պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	1	2	2
ոչ պետական բարձրագույն ուսումնական	4	4	3

Վանաձոր քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 105.2 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ և Բագում լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 120 կմ է, երկաթուղով՝ 224 կմ: Քաղաքի միջով հոսում են Տանձուտ և Վանաձոր գետերը:

Երբեմնի արդյունաբերական հզորություններով հարուստ ու միաժամանակ առողջարանային կենտրոն համարվող **քաղաքն** այսօր փորձում է վերագտնել իր նախկին տեսքը և վերականգնել իր նախկին համբավը:

Որոշակի ընդհատումներով գործում է քաղաքի **քիմիական համալիրը**: Քաղաքում գործում են բազմաթիվ մանր ու միջին արտադրական այլ ձեռնարկություններ, առավել քաղաքակիրթ ձև են ստանում առևտուրն ու ծառայությունների մատուցումը, տարբեր ֆինանսասավորման աղբյուրների հաշվին կատարվում են բնակարանային և արդյունաբերական շինարարության աշխատանքներ:

Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի շնորհիվ ամռան ամիսներին գործում է մանկական ճամբար, որոշակի ծանրաբեռնվածությամբ գործում է նաև քաղաքային առողջարանը:

Սպիտակ քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 15.1 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ գետի ափին, Երևանից 100 կմ, իսկ մարզկենտրոնից 20 կմ հեռավորության վրա: Ջրաղեցնում է 1400 հա տարածք: Քաղաքով է անցնում Երևան – Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհն ու երկաթուղին:

Սպիտակ քաղաքը մինչև 1988թ. հանրապետության **արդյունաբերական** կենտրոններից էր: Քաղաքում գործում էին հանրապետության միակ շաքարի գործարանն ու վերելակաշինական գործարանը: Ներկայումս քաղաքում գործում են փոքր ու միջին արտադրական մի քանի ձեռնարկություններ, բնակչության հիմնական մասը իր զբաղվածությունն է գտնում գյուղատնտեսության ոլորտում:

Ստեփանավան քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 16.3 հազ. բնակիչ) զբաղեցնում է 1666 հա տարածք, գտնվում է ծովի մակերևույթից 1375 մ. բարձրության վրա: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհը: Ստեփանավանը գտնվում է Երևանից 144 կմ, Վանաձորից՝ 24 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործել են արտադրական մանր ու միջին մի քանի ձեռնարկություններ, որոնք զբաղվել են սննդի , կահույքի և էլեկտրասարքերի արտադրությամբ:

Տաշիր քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 8.9 հազ. բնակիչ) հիմնադրվել է 1834թ., որպես ռուսական արտարավայր և կոչվել է Վորոնցովկա, հիմնականում ապրել են ռուսներ: 1991 թ. վերանվանվել է Տաշիր: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ավտոճանապարհը: Տաշիր քաղաքը գտնվում է Երևանից 162, Վանաձոր քաղաքից՝ 42 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործել են **կաթի վերամշակմամբ** զբաղվող մի քանի կազմակերպություններ, որոնց արտադրած կաթնամթերքը (պանիր,կարագ) լայն սպառում ունի ոչ միայն հանրապետությունում, այլև հանրապետությունից դուրս:

Ալավերդի քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 16.1 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ափին (Երևանից 167 կմ, Վանաձորից՝ 47 կմ հեռավորության վրա): Քաղաքը ձևավորվել է պղնձաձուլական գործարանի կառուցումից հետո: Վերագործարկված պղնձաձուլական արտադրությունը գործում է նաև այսօր, որի արտադրանքը կազմել է ՀՀ Լոռու մարզի տնտեսական ցուցանիշների ծանրակշիռ մասը:

Ախթալա քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 2.4 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի ձախ ափին (Երևանից 185 կմ հեռավորության վրա), լեռնային դարավանդի վրա: Քաղաքի արդյունաբերությունը մասնագիտացած է հանքագործական արդյունաբերությունում (արտադրվում է պղնձի խտանյութ):

Թումանյան քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 1.8 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի աջ ափին (Երևանից 152 կմ, Վանաձորից՝ 42 կմ հեռավորության վրա): Հետպատերազմյան շրջանում տեղական հումքի բազայի վրա կառուցվել է հրակայուն աղյուսի գործարան, որի շուրջն էլ ձևավորվել է ներկայիս Թումանյան քաղաքը:

Շամլուղ քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 0.7 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ձախ ափին (Երևանից 203 կմ, Վանաձորից՝ 63 կմ հեռավորության վրա): Հայտնի է իր **պղնձի, արծաթի հանքավայրերով** և համարվել է **հանքաշահագործման** կարևորագույն կենտրոններից մեկը Հարավային Կովկասում:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
Վանաձոր	ք. Վանաձոր
Ալավերդի	ք. Ալավերդի
	գ. Ակներ
Ախթալա	ք. Ախթալա
	գ. Առողջարանին կից
Թումանյան	ք. Թումանյան
	գ. Քոբեր կայարանի
Շամլուղ	ք. Շամլուղ
	գ. Ախթալա
	գ. Բենդիկ
Սպիտակ	ք. Սպիտակ
Ստեփանավան	ք. Ստեփանավան
	գ. Արմանիս
Տաշիր	ք. Տաշիր

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը		Բնակավայրի անվանումը
1	Ագարակ	
2	Ազնվածոր	
3	Աթան	
4	Ահնիձոր	
5	Ամրակից	
6	Այգեհատ	
7	Անտառամուտ	
8	Անտառաշեն (նախկինում` Գազանա- բուժական պետ. տնտեսություն)	
9	Ապավեն	
10	Արդվի	
11	Արծնի	
12	Արջուտ	
		<ul style="list-style-type: none"> • Արջուտ • Արջուտ կալարանին կից
13	Արևածագ	
14	Արևաշող	
15	Աքորի	
16	Բագում	
17	Բլագոդարնոյե	
18	Բովածոր	
19	Գարգառ	
20	Գեղասար	
21	Գյուլագարակ	
22	Գոգարան	
23	Գուգարք	
24	Դաշտաղեն	
25	Դարպաս	
26	Դեբես	
27	Դսեղ	
28	Եղեգնուտ	
29	Թեղուտ	
30	Լեջան	
31	Լեռնահովիտ	
32	Լեռնանցք	
33	Լեռնապատ	
34	Լեռնավան	
35	Լերմոնտով	
36	Լոռի բերդ	
37	Լորուտ	
38	Լուսադրյուր	
39	Խնկոյան	
40	Ծաթեր	
41	Ծաղկաբեր	
42	Ծաղկաշատ	
43	Կաթնադրյուր	
44	Կաթնաջուր	
45	Կաթնառատ	
46	Կաճաճկուտ	
47	Կարմիր Աղեկ	
48	Կողես	
49	Կուրթան	
50	Հագվի	

Համայնքի անվանումը		Բնակավայրի անվանումը
51	Հալավար	<ul style="list-style-type: none"> • Հալավար • Գյուլյուղարա • Հաղարի • Քիլիսա
52	Հաղպատ	
53	Հարթագյուղ	
54	Հորարձ	
55	Հովնանաձոր	
56	Ձյունաշող	
57	Ձորագետ	
58	Ձորագյուղ	
59	Ձորամուտ	<ul style="list-style-type: none"> • Ձորամուտ • Գոգավան
60	Դուրսալ	
61	Ճոճկան	
62	Մարգահովիտ	
63	Մարց	
64	Մեղովկա	<ul style="list-style-type: none"> • Մեղովկա • Կրուգայա շիշկա
65	Մեծ Այրում	<ul style="list-style-type: none"> • Մեծ Այրում • Փոքր Այրում
66	Մեծավան	
67	Մեծ Պառնի	
68	Մեղվահովիտ	<ul style="list-style-type: none"> • Մեղվահովիտ • Նորամուտ
69	Միխայելովկա	
70	Մղարք	
71	Յաղրան	
72	Նեղոց	
73	Նովոսելցովո	
74	Նորաշեն	
75	Նոր Խաչակապ	
76	Շահումյան	
77	Շամուտ	
78	Շենավան	
79	Շիրակամուտ	
80	Շնող	
81	Չկալով	
82	Պաղարքյուր	
83	Պետրովկա	
84	Պրիվոլնոյե	
85	Պուշկինո	
86	Ջիլիզա	
87	Ջրաշեն	
88	Սարալանջ	
89	Սարահարք	
90	Սարամեջ	
91	Սարատովկա	<ul style="list-style-type: none"> • Սարատովկա • Գետավան

Համայնքի անվանումը		Բնակավայրի անվանումը
92	Սարչապետ	
93	Սվերդլով	
94	Վահագնաձոր	
95	Վահագնի	
96	Վարդարյուր	
97	Ուռուտ	
98	Ուրասար	
99	Փամբակ	
		<ul style="list-style-type: none"> • Փամբակ
		<ul style="list-style-type: none"> • Փամբակ կայարանին կից
100	Քարաբերդ	
101	Քարաձոր	
102	Քարինջ	
103	Քարկոփ	
104	Օձուն	
		<ul style="list-style-type: none"> • Օձուն
		<ul style="list-style-type: none"> • Ամոց
105	Ֆիլիտովո	

